

ԻՆՉՊԵՐՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԴԵՂՈՐԱՅՔԸ

Պորձածեք միայն անհրաժեշտության դեպքում

Որոշ մարդիկ կարծում են, որ եթե հիվանդության ընթացքում դեղորայք չգործածեն, ապա չեն առողջանա: Բոլորովին էլ այդպես չէ: Որոշ խնդիրների դեպքում, օրինակ՝ մրսածության, լավագույն բուժումը ժամանակը և հանգիստն են: Այլ խնդիրների դեպքում էլ բավարար են հազեցած սնունդն ու մաքուր ջուրը: Ջգուշացեք այն բուժաշխատողներից, ովքեր ձեզ առաջարկում են տարբեր և մեծաքանակ դեղամիջոցներ:



Բուժման ամբողջ փուլը

Նույնիսկ, եթե ձեզ արդեն ավելի լավ եք զգում, ապա ընդունեք դեղորայքի նշանակված քանակությունը: Երբեմն ոչ լրիվ չափաքանակի ընդունումը կարող է հիվանդության կրկնման պատճառ դառնալ: Նույնիսկ հնարավոր է, որ տվյալ դեղորայքը այլևս կորցնի իր ազդեցությունը:

Մի՛ ընդունեք չափաքանակից ավել դեղորայք

Այն ոչ միայն չի օգնի ձեր շուտ ապաքինմանը, այլև կարող է բարդությունների առաջացման պատճառ դառնալ:

Ուշադիր եղեք խնդիրների առաջացման նշաններին

Որոշ դեղամիջոցներ ունենում են նաև կողմնակի ազդեցություններ կամ կարող են ավերգիայի առաջացման պատճառ դառնալ:

Հնարավորինս շատ տեղեկացված եղեք դեղամիջոցի մասին

Բժշկից կամ դեղագործից մանրամասն տեղեկացեք այն դեղորայքի մասին, որն ընդունում եք կամ հնարավոր է, որ գործածեք հետագայում:

Խմելու համար նախադեպած դեղամիջոցները (դեղահաբեր, դեղապարհաներ) սովորաբար ավելի ապահով են

Այս գրքում մենք առաջարկում ենք այդպիսի դեղորայք: Տալիս ենք տեղեկություններ նաև այն դեղամիջոցների մասին, որոնցով ներարկումներ են կատարվում: Վերջինիս անհրաժեշտության դեպքում դիմեք բուժաշխատողի:

Միատեսակ դեղորայքն ավելի ապահով է և մադչելի, քան համակըցված դեղամիջոցները

Բայց որոշ տեսակներ, հատկապես՝ ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի դեմ ուղղված դեղորայքը, ավելի արդյունավետ կլինի ընդունել համակցված ձևով:

Կարևոր է.

- Հնարավորության դեպքում դեղորայքն ընդունեք կանգնած կամ նստած վիճակում և անպայման՝ մի բաժակ ջրով:
- Եթե դեղահաբն առաջացնում է սրտխառնոց, և դուք փսխում եք, ապա պետք է նորից խմել:
- Հակաբեղմնավորիչ ընդունելուց հետո՝ 3 ժամվա ընթացքում, եթե կրկնվում է նույն երևույթը, ապա ընդունեք ևս մեկ հաբ՝ հղիանալու վտանգը կանխելու համար:

Երբ հաշմանդամության դեմ ընդունվող դեղորայքի հետք գործածում եք նաև այլ դեղամիջոցներ

Եթե պարբերաբար դեղամիջոցներ եք ընդունում, ապա հնարավոր է, որ դրանք չհամակցվեն այս գրքում նշված որոշ դեղամիջոցների հետ: Դրանցից մի քանիսը կարող են թուլացնել հաշմանդամության դեմ գործածվող դեղորայքի ազդեցությունը կամ՝ հակառակը: Օրինակ, եթե ընդունում եք պենիստոն՝ ընկնավորության դեմ, ապա չպետք է խմեք հակաբեղմնավորիչ հաբեր, որոնք պարունակում են և՛ էստրոգեն, և՛ պրոգեստերոն և կարող են սրացնել ձեր նուպաները: Ջրուցեք գիտակ բուժաշխատողի կամ դեղագործի հետ՝ պարզելու, թե հնարավոր է, որ ձեր ընդունած դեղորայքը փոխազդեցության մեջ մտնի նոր նշանակված դեղամիջոցների հետ, եթե՝ այո, ապա կարելի է այն փոխարինել այլ դեղամիջոցով:



Բարեբախտաբար, այս գրքում նշված ոչ բոլոր դեղամիջոցներն են հակազդեցության մեջ մտնում այլ դեղորայքի հետ:

Ալերգիա


Ոմանք ալերգիկ են որոշ դեղամիջոցների նկատմամբ, երբ ընդունում են, նրանց օրգանիզմը հակազդում է: Հակազդեցությունը կարող է անհարմարություններ պատճառել՝ մաշկային ցան, աչքերի և մաշկի քոր, շրթունքների կամ դեմքի այտուցներ, ծանր շնչառություն, կամ կարող է ավելի լուրջ և վտանգավոր հետևանքներ ունենալ՝ գունատություն, սառը և տաք քրտինք, թույլ կամ արագ սրտխփոց, շնչարգելություն, արյան ցածր ճնշում, գիտակցության կորուստ:



Եթե մարդն ընկնում է ալերգիկ շոկի մեջ, ապա անհրաժեշտ է անհապաղ դիմել բժշկական օգնության:

Սի՛ր ընդունեք այն դեղամիջոցը, որի նկատմամբ ալերգիկ եք, և մի՛ գործածեք այդ ընտանիքին պատկանող այլ դեղամիջոցներ:

Դեղորայքի անվանումները



Ապրանքանիշային

գիտական

Սովորաբար դեղամիջոցներն ունենում են երկու անվանում: Դեղորայքի գիտական անվանումը նույնն է ամբողջ աշխարհում: Որոշ ձեռնարկություններ իրենց արտադրած յուրաքանչյուր դեղամիջոցին տալիս են ապրանքանիշային անվանում: Երկու տարբեր ձեռնարկությունների կողմից արտադրված նույն դեղամիջոցը կարող է ունենալ երկու անվանում: Այս գրքում մենք նշում ենք գիտական անվանումները:

Եթե դեղամիջոցի գիտական անվանումը նույնն է, ապա կարող եք օգտագործել մեկը մյուսի փոխարեն՝ անկախ արտադրող ձեռնարկությունից: Որոշ ապրանքանիշեր ավելի մատչելի են, մյուսներն՝ ավելի թանկ:

Ի՞նչ չափաբաժնով դեղորայք ընդունել

Հիմնականում դեղահաբերի, դեղապատիճների, ներդիրների և ներարկվող դեղորայքի չափաբաժինները որոշվում են գրամներով (գ), միլիգրամներով (մլ/գ), միկրոգրամներով (մկ/գ) և միավորներով (մ):

ՇՐՋԱՆԱԿԱՆ ԿՐԿՆՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱԿՈՒՄ

1000մլ/գ=1գ (1000 միլիգրամը հավասար է 1գրամի)

1մլ/գ= 0.001գ (1միլիգրամը հավասար է գրո ամբողջ մեկ հազարերորդական գրամի)

Որոշ դեղամիջոցներ, ինչպիսիք են հակաբեղմնավորիչ հաբերը, չափվում են միլրոգրամներով


1=1=1/1000մլ/գ=0.001մլ/գ

(1միլիգրամը հավասար է 1000 միկրոգրամի)

Ներարկման դեղամիջոցները չափվում են միավորներով (Մ) կամ միջազգային միավորներով (ՄՄ):

Տարբեր դեղամիջոցներ

Գեղամիջոցները լինում են տարբեր տեսակի, և այս գրքում մենք նկարների միջոցով կներկայացնենք դրանց ընդունման եղանակները.



Ներարկելը դեղորայքը, եթե տեսնում եք այս նկարը



Ընդունել դեղահաբեր, դեղապատիճներ կամ ներդիրներ՝ այս նկարի դեպքում



Օգտագործել քսուք՝ ըստ այս նկարի



Գործածել կաթիլներ՝ տե՛ս այս նկարը



Օգտագործել դեղային օշարակ՝ այս նկարի դեպքում

Գեղահաբերն ավելի ապահով են, քան ներարկումները: Բայց խիստ անհրաժեշտության դեպքում դրանք ավելի արագ են գործում:

Զգուշացում

Այս նկարները զգուշացնող և օգտակար են բոլոր այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է հղի կամ կրծքով կերակրող կանանց հատուկ խնամքին:



Գեղորայքի տեսակները

Այս գրքում նշված են դեղորայքի մի քանի տեսակներ: Հակաբորբոքայիններն անհրաժեշտ է ներկայացնել որպես խումբ:

Հակաբորբոքայիններ

Սրանք պայքարում են մանրէների պատճառով առաջացած բորբոքումների դեմ, չեն բուժում վիրուսային հիվանդությունները՝ հարբուխ, հեպատիտներ կամ ՄԻԱՎ/ՉԻԱՀ: Նմանատիպ հակաբորբոքայինները պատկանում են նույն խմբին և հաճախ օգտագործվում են նույն հիվանդության բուժման ժամանակ: Այսպիսով, եթե չեք կարող գտնել որևէ հակաբորբոքային, այն կարելի է փոխարինել նույն խմբին պատկանող այլ դեղամիջոցով: Եթե ալերգիկ եք որևէ հակաբորբոքայինի նկատմամբ, ապա, հավանաբար, ձեզ հակացուցված է նաև տվյալ դեղորայքի խմբին պատկանող այլ դեղամիջոցի գործածությունը:

Որոշ հակաբորբոքայինների և նրանց ընդամիջների մասին

Պենիցիլիններ. ամոքսիցիլին, ամպիցիլին, բենզատին, պենիցիլին, բենզիլպենիցիլին, դիքլոքսացիլին, պրոկաին պենիցիլին և այլն

Մաքրոլիդներ. ազիտրոմիցին, էրիտրոմիցին և այլն

Տետրացիկլիններ. դոքսիցիլին, տետրացիկլին և այլն

Սուլֆաս (սուլֆոնամիդներ). Սուլֆամետոքսազոլ (քոտրիմոքսազոլի մի մասն է) և այլն

Ամինոգլյուկոզիդներ. գենտամիցին, ստրեպտոմիցին և այլն


Ցեֆալոսպորիններ. ցեֆիքսիմ, ցեֆալեքսիմ և այլն

Հակաբորբոքայիններն ունեն շատ մեծ կիրառում: Օգտագործեք դրանք միայն անհրաժեշտության դեպքում:

Հիվանդությունների ցանկ

Ստորև ներկայացված է դեղորայքային բուժում պահանջող հիվանդությունների մի ցանկ: Աջ կողմում ներկայացված են դեղամիջոցները, իսկ ձախում՝ հիվանդությունները:

Եթե չեք կողմնորոշվում, թե ձեզ ինչ դեղորայք է անհրաժեշտ, կամ այն, ինչ ընդունում եք, չի օգնում ձեզ, ապա դիմեք փորձառու բժշկի կամ դեղագործի: Նրանք կօգնեն պարզել, թե այն դեղորայքը, որն առավել արդյունավետ է ձեզ համար, հասանելի^o է արդյոք ձեր համայնքում:



Ացետամինոֆեն կամ պարացետամոլ (Ապապ, Պանադոլ, Տեմպրա, Տիլենոլ և այլն)

Ացետամինոֆենը և պարացետամոլը նույն դեղամիջոցի երկու անվանումներն են, օգտագործվում են ցավը թեթևացնելու և ջերմությունը իջեցնելու դեպքում:

WARNING!

Ացիբրոլիբ (Չովիրաքս)



Ացիբրոլիբը վիրուսապան դեղամիջոց է, օգտագործվում է նաև հերպեսի բուժման ժամանակ: Հակառակ պարագայում առաջացնում է ցավոտ բշտիկներ սեռական օրգաններում, սրբանում և բերանի մեջ:

Կարևոր է. ացիբրոլիբը չի կանխում հերպեսի առաջացումը, բայց մեղմացնում է ցավն ու կանխում դրա տարածումը:

Կողմնակի ազդեցություններ՝ կարող է առաջացնել գլխացավ, գլխապտույտ, սրտխառնոց և սրտթափոց:

Սովորաբար լինում է դեղահաբերի 200, 400, 800մլ/գրամ և 5%-անոց քսուրի տեսքով:

Դեղահաբերն ավելի արդյունավետ են, քան քսուրը, և սովորաբար ավելի ցածր արժեք ունեն: Խմելիս գործածել ջրի մեծ քանակություն:







Օգտագործման ձևը. սեռական օրգաններում հերպեսի առաջացման ժամանակ խմել օրական 5 անգամ 200մլ/գրամ՝ 7-10 օր, կամ օգտագործել քսուրը օրական 6 անգամ՝ 7օրվա ընթացքում: Անմիջապես լվանալ ձեռքերը:







Զգուշացում. երիկամների հետ կապված խնդիրների ժամանակ խորհուրդ չի տրվում օգտագործել տվյալ դեղամիջոցը:

ՄԻԴՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԻՍ ԻՐԱԿՈՒՆԵՐ

Ամոքսացիլին (Ամոքսիֆար, Ամոքսիլ, Հիմաքս, Սեգամոքս, Սիմոքսիլ)	
<p>Ամոքսացիլինը պենիցիլինի դասին պատկանող հակաբորբոքային է, գործածվում է տարբեր բորբոքումների բուժման ժամանակ:</p> <p>Կարևոր է. ընդունել սննդի հետ: Երեք օրվա ընթացքում փոփոխություն չնկատելու դեպքում` դիմել բժշկի: Հնարավոր է` այլ դեղամիջոցի կարիք լինի:</p> <p>Կողմնակի ազդեցություններ` փորլուծություն, ցան, սրտխառնոց և սրտթափոց: Կանանց օրգանիզմում կարող է առաջացնել սնկային վարակ, իսկ երեխաների նստատեղի հաստվածում արտահայտվել ցանի տեսքով:</p>	
	<p>Օգտագործման ձևը. միզապարկի վարակների դեպքում ընդունել օրական 3 անգամ 500մլ/գրամ` 3 օրվա ընթացքում:</p> <p>Երկվամային ինֆեկցիաների դեպքում խմել օրական 3 անգամ 500մլ/գրամ` 7 օրվա ընթացքում:</p> <p>Ծննդաբերությունից հետո արգանդի վարակների դեպքում ընդունել օրական 3 անգամ 1-ական գրամ` 10 օրվա ընթացքում (կարելի է նաև օգտագործել այլ դեղորայքի հետ):</p> <p>Փոխարինող դեղամիջոցներ` նշված դեպքերում.</p> <ul style="list-style-type: none"> • միզապարկի և երիկամների բորբոքման` ցեֆիքսիմ, ցիպրոֆլոքսացին, բրոքրիմոքսազոլ, միարոֆուրանտոն, նոքսիլոքսացին, • ծննդաբերությունից հետո արգանդի բորբոքման` ամպիցիլին, ցիպրոֆլոքսացին, դոքսիցիլին, մետրոնիդազոլ:
	<p>Զգուշացում. պենիցիլինի խմբին պատկանող դեղամիջոցների նկատմամբ ալերգիկ լինելու դեպքում խորհուրդ չի տրվում օգտագործել տվյալ դեղամիջոցը:</p>

Ամպիցիլին (Ամցիլ, Ամպիցին, Օմնիպեն, Պենրիտին, Պոլիցիլին)	
<p>Ամպիցիլինը պենիցիլինի դասին պատկանող դեղամիջոց է, օգտագործվում է տարբեր բորբոքումների բուժման ժամանակ:</p> <p>Կարևոր է. ընդունել ուտելուց առաջ: 3 օրվա ընթացքում դրական փոփոխություն չնկատելու դեպքում` դիմել բժշկի: Հնարավոր է, որ առաջանա այլ դեղորայքի անհրաժեշտություն:</p> <p>Կողմնակի ազդեցություններ. կարող է առաջացնել ստամոքսի խանգարում, փորլուծություն և ցան:</p>	
	<p>Օգտագործման ձևը հետևյալ հիվանդությունների դեպքում.</p> <p>Հղիության շրջանում արգանդի բորբոքումների` ընդունել օրական 4 անգամ 500մլ/գրամ` մինչև բժշկի դիմելը:</p> <p>Ծննդաբերության ընթացքում ստացած վարակների` խմել օրական 4 անգամ 2-ական գրամ` 7-10 օրվա ընթացքում:</p> <p>Հետծննդաբերական շրջանում առաջացած վարակների` ջերմության իջնելուց հետո ևս 2օր ընդունել օրական 4 անգամ 2-ական գրամով: Կարելի է գործածել նաև այլ հակաբորբոքայիններ:</p> <p>Փոխարինող դեղամիջոցներ Հղիության ընթացքում արգանդի բորբոքումների դեպքում` մետրոնիդազոլ Ծննդաբերությունից հետո արգանդի բորբոքումների դեպքում` ամոքսացիլին, ցիպրոֆլոքսացին, դոքսիցիլին, մետրոնիդազոլ</p>
	<p>Զգուշացում. պենիցիլինի դասին պատկանող դեղամիջոցների նկատմամբ ալերգիկ լինելու դեպքում խորհուրդ չի տրվում օգտագործել տվյալ դեղամիջոցը:</p>


WARNING!

<p>Ասպիրին (ացետիլսալիցիլիք ացիդ, ԱՍԱ)</p>		
<p>Ասպիրինը օգտագործվում է այտուցների, ցավերի դեպքում՝ ներառյալ՝ հոդացավերի և ջերմության նվազեցման:</p> <p>Կարևոր է. ընդունել սննդի, կաթի կամ մի բաժակ ջրի հետ: Այն գործածվում է մասնաբաժանված հետևանքով առաջացած ցավերը մեղմացնելու նպատակով:</p> <p>Կողմնակի ազդեցություններ՝ կարող է առաջացնել ստամոքսի ցավեր, խանգարում, կամ արյան մակարդեղիության հետ կապված խնդիրներ:</p> <p>Զարաչափան դեպքում՝ աղմուկ ականջներում, գլխացավ, գլխապտույտ, շփոթություն, շնչառական խնդիրներ:</p>		
<p>Օգտագործման ձևը՝ նշված դեպքերում. ցավի, այտուցների կամ ջերմության՝ ընդունել 600մլ/գրամ, ոչ ավելի, քան օրական 6 անգամ:</p> <p>Փոխարինող դեղամիջոցներ.</p> <ul style="list-style-type: none"> • ցավի կամ ջերմության դեպքում ընդունել պարացետամոլ, • նույն երևույթների կամ այտուցների դեպքում՝ իբուպրոֆեն: 		
<p>Այլ դեղամիջոցների հետ հակազդեցություններ Վալպրոիք ացիդի և Ֆենիթոնի հետ ասպիրին ընդունելու դեպքում կարող է ուժեղանալ առաջին երկուսի ադեցությունը:</p>		
	<p>Զգուշացում. այս դեղամիջոցը խորհուրդ չի տրվում ընդունել հղի կանանց վերջին 3 ամիսների ընթացքում: Ստամոքսի խոց կամ արյան մակարդան հետ կապված խնդիրներ ունեցող անձանց արգելվում է ասպիրինի գործածությունը: Խորհուրդ չի տրվում ընդունել վիրահատությունից առաջ, կրծքով կերակրող մայրերին՝ երեխայի կյանքի առաջին շաբաթների ընթացքում, ինչպես նաև՝ երեխաներին: Եթե աղմուկ եք զգում ականջներում (թունավորման նախանշան), ապա դադարեցրեք դեղորայքի ընդունումը: Որոշ ժամանակ անց վերսկսեք, բայց՝ ավելի քիչ չափաբաժնով:</p>	



ՄԻԿՐՈԿԵՆՏՐՈՆԻ ԻՍԻՆՏԵՆՏՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



Ադրենալին կամ էպինեպրին



Սրանք նույն դեղամիջոցի երկու անվանումներն են: Օգտագործվում են սուր ալերգիկ հակազդեցությունների, ալերգիկ շոկի և ասթմայի (շնչարգելք) սուր նոպաների ժամանակ:

<p>Բենզիլպենիցիլին (Բեյլինեքս, Հի-Դ-ո-Պեն, պենիցիլին Գ պոտասիում կամ սոդա)</p>	
<p>Բենզիլպենիցիլինը պենիցիլինի ընտանիքին պատկանող դեղամիջոց է, օգտագործվում է բարդ ինֆեկցիաների բուժման ժամանակ:</p> <p>Կարևոր է. կարող է առաջացնել ալերգիկ հակազդեցություն:</p> <p>Կողմնակի ազդեցություններ՝ կանանց օրգանիզմում կարող է առաջացնել սնկային վարակներ, իսկ երեխաների նստատեղի հատվածում՝ ցան:</p>	
<p>Օգտագործման ձևը. նորածնի մկանների փայտացման դեպքում 100.000 միավոր/կիլոգրամ միջանկանային ներարկում կատարել և դիմել բժշկի:</p>	
	<p>Զգուշացում. հետևեք ալերգիայի կամ ալերգիկ շոկի առաջացման նշաններին:</p>






Ազիտրոմիցին (Չիտրոմաքս)	
<p>Ազիտրոմիցինը մաքրոլիդի ընտանիքին պատկանող դեղամիջոց է, օգտագործվում է սեռական ճանապարհով փոխանցվող տարբեր վարակների բուժման ժամանակ: Թանկարժեք և ոչ մատչելի դեղամիջոց է, սակայն շատ օգտակար է վերը նշված վարակների բուժման ժամանակ, այն դեպքում, երբ մյուս հակաբորբոքայինները չեն օգնում:</p> <p>Կարևոր է. ընդունել ուտելուց առնվազն 1 ժամ առաջ կամ 2 ժամ հետո: Այն գերազանց միջոց է սեռական ճանապարհով փոխանցվող այնպիսի վարակների բուժման համար, որոնք առաջացնում են արտադրություն և վերքեր: Այս հակաբորբոքային դեղամիջոցը օգտակար է այն դեպքում, երբ այլ դեղորայքի նկատմամբ դիմադրողակամություն է առաջացնում:</p> <p>Կողմնակի ազդեցություններ` գլխապտույտ, սրտխառնոց, սրտթափոց և որովայնային ցավեր:</p> <p>Օգտագործման ձևը Քլամիդիոզի, շանքրոիդի, սեռական օրգանների բորբոքումների դեպքում խմել օրական 1 անգամ` 1-ական գրամ:</p> <p>Փոխարինող դեղամիջոցներ` նշված վարակիչ հիվանդությունների դեպքում.</p> <ul style="list-style-type: none"> • քլամիդիոզ` ամոքսիցիլին, դոքսիցիլին, էրիտրոմիցին, տետրացիկլին, • շանքրոիդի` ցիպրոֆլոքսացին, էրիտրոմիցին: 	
	<p>Օգտագործման ձևը Քլամիդիոզի, շանքրոիդի, սեռական օրգանների բորբոքումների դեպքում խմել օրական 1 անգամ` 1-ական գրամ:</p> <p>Փոխարինող դեղամիջոցներ` նշված վարակիչ հիվանդությունների դեպքում.</p> <ul style="list-style-type: none"> • քլամիդիոզ` ամոքսիցիլին, դոքսիցիլին, էրիտրոմիցին, տետրացիկլին, • շանքրոիդի` ցիպրոֆլոքսացին, էրիտրոմիցին:
	<p>Զգուշացում. Խորհուրդ չի տրվում օգտագործել, եթե ալերգիկ եք էրիտրոմիցինի կամ մաքրոլիդի ընտանիքին պատկանող այլ դեղամիջոցների նկատմամբ:</p>

Բենզաթին պենիցիլին (Բիցիլին Լ-Ա, Պենագոր Լ-Ա, Պերմապեն)	
<p>Սա պենիցիլինի ընտանիքին պատկանող երկարաժամկետ ազդեցություն ունեցող դեղամիջոց է, օգտագործվում է սիֆիլիսի, սեռական օրգաններում խոցի և այլ վարակների դեպքում:</p> <p>Կարևոր է. միշտ կատարվում է միջմկանային ներարկում:</p> <p>Կողմնակի ազդեցություններ. որոշ մարդկանց մաշկի վրա առաջացնում է ցան և պիզմենտներ(գունանյութ), որոնք ուղեկցվում են քորով:</p> <p>Երբեմն նաև ալերգիկ շոկի պատճառ է դառնում: Ներարկումից անմիջապես հետո մարդը գունատվում է (սառը քրտինք), ունենում թուլություն, հաճախանում են սրտի զարկերը, դժվարանում է շնչառությունը, կորցնում է գիտակցությունը:</p> <p>Անհապաղ պետք է ներարկել Էպինեֆրին:</p>	
	<p>Օգտագործման ձևը Սիֆիլիսի դեպքում, եթե առկա է քարախային վերք, կատարել միջմկանային ներարկում միայն մեկ անգամ` 2.4 միլիոն միավոր: Եթե արվել է արյան ստուգում, կամ վերքերն արդեն լավացել են, ապա նույն ներարկումը կատարել շաբաթական մեկ անգամ` 3 շաբաթվա ընթացքում:</p> <p>Փոխարինող դեղամիջոցներ Սիֆիլիսի դեպքում` դոքսիցիլին, տետրացիկլին, էրիտրոմիցին</p>
	<p>Զգուշացում. ամեն անգամ պենիցիլին գործածելուց առաջ նախ էպինեֆրին ներարկել ձեռքի վրա և հետևեք ալերգիկ հակաազդեցության կամ շոկի առաջացման նախանշաններին, որոնք ի հայտ են գալիս 30 րոպեի ընթացքում:</p>

<p>Ցեֆիբսիմ (Սուպրասա)</p> <p>Այս դեղամիջոցը ցեֆալոսպորինի ընտանիքին պատկանող հակաբորբոքային է, օգտագործվում է տարբեր վարակիչ հիվանդությունների ժամանակ, ներառյալ՝ գոնոռեան, սեռական ներքին օրգանների և երիկամների բորբոքումները:</p> <p>Կարևոր է. կարող է առաջացնել ալերգիկ հակազդեցություն:</p> <p>Կողմնակի ազդեցություններ՝ ստամոքսի խանգարում, փորլուծություն, գլխացավ:</p>	
<p>Օգտագործման ձևը Գոնոռեայի դեպքում խմել օրական 1 անգամ՝ 400մլ/գրամ: Երիկամների բորբոքումների ժամանակ խմել օրական 2 անգամ 500մլ/գրամ՝ 10 օրվա ընթացքում:</p> <p>Փոխարինող դեղամիջոցներ.</p> <ul style="list-style-type: none"> • գոնոռեայի դեպքում՝ ցիպրոֆլոքսացին, դոքսիցիլին, նոքսիտրասացին, • երիկամների բորբոքման դեպքում՝ քոտրիմոքսազոլ, ցիպրոֆլոքսացին 	
<p> Զգուշացում. նրանք, ովքեր ունեն լյարդի հետ կապված խնդիրներ, պետք է շատ զգույշ լինեն ցեֆիբսիմի օգտագործման ընթացքում: Խորհուրդ չի տրվում այն մարդկանց, ովքեր ալերգիկ են ցեֆալոսպորինի ընտանիքին պատկանող հակաբորբոքայինների նկատմամբ:</p>	

ՄԻԿՐՈԲԻՍԻԿԱԿԱՆ ԻՆՖԵԿՑԻՆԵՐԻ ԲՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

<p>Ցիպրոֆլոքսացին (Ցիլոքսան, Ցիպրո, Ցիպրոբայ)</p> <p>Սա <i>ֆլորոսիսինոլոնների</i> ընտանիքին պատկանող ուժեղ ազդեցություն ունեցող հակաբորբոքային է, օգտագործվում է մաշկի, երիկամների բորբոքումների, սեռական ճանապարհով փոխանցվող այնպիսի վարակիչ հիվանդությունների դեպքում, ինչպիսիք են գոնոռեան, շանքրոիդը և սեռական օրգանների բորբոքումները:</p> <p>Կարևոր է. ընդունել մեծ քանակության ջրի, մաև սննդի հետ, խուսափեք միայն կաթնամթերքի հետ գործածումից:</p> <p>Կողմնակի ազդեցություններ՝ սրտխառնոց, փորլուծություն, սրտափոց, գլխացավ:</p>	
<p>Օգտագործման ձևը՝ հետևյալ հիվանդությունների դեպքում.</p> <ul style="list-style-type: none"> • գոնոռեայի՝ խմել 500մլ/գրամ օրական մեկ անգամ, • շանքրոիդի՝ ընդունել օրական 2 անգամ 500մլ/գրամ՝ 3 օրվա ընթացքում, • հետմենդաբերական շրջանի վարակների՝ ընդունել օրական 2 անգամ 500մլ/գրամ, • երիկամային ինֆեկցիաների՝ օրական 2 անգամ 500մլ/գրամ՝ 10 օրվա ընթացքում: <p>Փոխարինող դեղամիջոցներ.</p> <ul style="list-style-type: none"> • գոնոռեա՝ ցեֆիբսիմ, • շանքրոիդ՝ ազիտրոմիցին, էրիտրոմիցին, • երիկամային ինֆեկցիաների դեպքում- ցեֆիբսիմ, քոտրիմոքսազոլ: 	<p>WARNING!</p>  
<p> Զգուշացում. այս դեղորայքը հակազդեցության մեջ է մտնում կոֆեինի հետ՝ սուրճ, շոկոլադ, գազավորված ըմպելիքներ և այլն՝ ուժեղացնելով վերջինիս ազդեցությունը: Խորհուրդ չի տրվում ընդունել կաթնամթերքի հետ: Հղիության և կրծքով կերակրելու ընթացքում խուսափեք տվյալ դեղամիջոցի օգտագործումից, ինչպես նաև՝ 16 տարեկանից փոքր լինելու դեպքում:</p>	

WARNING!

ԾԱԵՆՍԱԳԵՆ ԴԳՍՍԵՆՏՑՈՆ ԱՊՏԵՐԿ

Քլինդամիցին (Քլեոցին, Դալասին)



Սա լինկոզամիդինների ընտանիքին պատկանող հակաբորբոքային է, օգտագործվում է սեռական օրգանների, նստատեղի և մաշկի ինֆեկցիաների բուժման ժամանակ:

Կարևոր է. Էրիտրոմիցինի և քլորամֆենիզոլի հետ տվյալ դեղորայքի համատեղ ընդունումը նվազեցնում է երկու դեղամիջոցների ազդեցությունները: Եթե քսուքի օգտագործման ընթացքում ունենում եք դաշտան, ապա խորհուրդ չի տրվում ներդիր գործածել, քանի որ այն կկլանի դեղորայքը:

Կողմնակի ազդեցություններ` սրտխառնոց, փորլուծություն, սրտթափոց, որոնք առաջանում են դեղորայքի ընդունման սկզբնական շրջանում: Չեր մաշկի վրա ցանի առկայության դեպքում դադարեցրեք դեղորայքի ընդունումը և դիմեք բուժաշխատողի:



Օգտագործման ձևը.

- **բակտերիալ վագինոզի** դեպքում խմել օրական 2 անգամ 300մլ/գրամ` 7 օրվա ընթացքում, կամ քնելուց առաջ 5 գրամ քսուք տեղադրել հեշտոցի մեջ` 7 օրվա ընթացքում,
- **տրիխոմոնասի** դեպքում ընդունել օրական 2անգամ 300մլ/գրամ` 7 օրվա ընթացքում:

Փոխարինող դեղամիջոցներ

Բակտերիալ վագինոզի դեպքում` մետրոնիդազոլ:



Զգուշացում. 30 օրից ավել օգտագործումը կարող է առաջացնել սնկային վարակներ և վնասել լյարդի կամ երիկամների խնդիրներ ունեցող մարդկանց: Օգտագործելուց հետո 3 օրվա ընթացքում քսուքը կարող է թուլացնել պահպանակը: Եթե կրծքով կերակրման ընթացքում երեխան փորլուծություն է ունենում, ապա դադարեցրեք դրա ընդունումը:

Քլոտրիմազոլ (Անեստեն, Գինե-Լոտրիմին, Միցելեքս)

Քլոտրիմազոլը հակասնկային դեղամիջոց է, օգտագործվում է սեռական օրգանների, բերանի և մաշկի սնկային վարակների բուժման ժամանակ:

Կարևոր է. Եթե դեղորայքն ընդունել եք սեռական օրգաններում սնկային վարակների բուժման համար, ապա խուսափեք սեռական հարաբերություն ունենալ դեղամիջոցը օգտագործելուց հետո` 3 օրվա ընթացքում: Այն կարող է թուլացնել պահպանակի քաղանքը: Խուսափեք նաև աչքի հետ շփումից և դադարեցրեք դեղորայքի ընդունումը, եթե այն առաջացնում է գրգռվածություն:

Կողմնակի ազդեցություններ` գրգռվածություն և ստամոքսի խանգարում:



Օգտագործման ձևը

Սեռական օրգաններում սնկային հիվանդությունների դեպքում.

100մլ/գրամանոց ներդիրների կամ 1%-անոց քսուքի դեպքում` տեղադրել 1 ներդիր կամ քսուքի 5 գրամ հեշտոցի մեջ` 7օրվա ընթացքում:

200մլ/գրամանոց ներդիրների կամ 2%-անոց քսուքի դեպքում` տեղադրել 1 ներդիր կամ քսուքի 5 գրամ հեշտոցի մեջ` 3 օրվա ընթացքում:

Բերանում առաջացած սնկային ինֆեկցիաների ժամանակ` ընդունել 1հաբ օրական 5 անգամ` 14օրվա ընթացքում: Խորհուրդ չի տրվում ծամել կամ կոլ տալ այն:

Մաշկի սնկային բորբոքումների դեպքում` տարածեք այն բորբոքված մաշկի վրա բարակ շերտով օրական 2 անգամ` 2-8 շաբաթվա ընթացքում:

Փոխարինող դեղամիջոցներ` գենտիան, վիոլետ, նիստատին, միցոնազոլ

WARNING!



Քոտրիմաքսազոլ (տրիմետոփրիմ+սուլֆամետոքսազոլ)
(Ազոլանտանոլ, Բաքտրիմ, Քոպտին, Գանտանոլ, Պոլոգրիմ, Սեպտրա,
Սուլֆատրիմ, ՏՄՊ/ՍՄՔՍ, Տրիմպեքս և այլն)

Քոտրիմաքսազոլը 2 հակաբորբոքայինների համակցություն է, (որոնցից մեկը պատկանում է սուլֆա ընտանիքին), օգտագործվում է երիկամների և միզապարկի բորբոքումների, գոնոռեայի պատճառով սեռական օրգաններում առաջացած արտադրության և շանքրոիդի բուժման ժամանակ: Կանխում է նաև փորլուծությունը, թոքաբորբը և ՄԻԱՎ-ի պատճառով առաջացած այլ ինֆեկցիաներ:

Կարևոր է. խմել ջրի մեծ քանակության հետ:

Կողմնակի ազդեցություններ. դադարեցրեք դեղորայքի ընդունումը, եթե առաջացնում է ցան կամ բոր: Հնարավոր է ունենաք նաև սրտխառնոց և սրտթափոց: Դեղորայքի չարաշահումը կարող է առաջացնել փորլուծություն, շփոթություն և քրտնարտադրություն:

Սովորաբար լինում է 5մլ/լիտրում 120մլ/գրամ (20մգ տրիմետոպրիմ+100մգ սուլֆամետոքսազոլ), 480մլ/գրամ (80մգ տրիմետոպրիմ+400մգ սուլֆամետոքսազոլ՝ 1չափաբաժին), 960մլ/գրամ դեղահաբերի (60մգ տրիմետոպրիմ+800մգ սուլֆամետոքսազոլ՝ կրկնակի չափաբաժին), 240մլ/գրամ հեղուկի տեսքով:



Օգտագործման ձևը՝ նշված դեպքերում.

- **միզապարկի բորբոքման՝** ընդունել օրական 2 անգամ 480մլ/գրամանոց 2 հաբ՝ 3 օրվա ընթացքում,
- **երիկամների բորբոքման՝** գործածել օրական 2 անգամ 480մլ/գրամանոց 2 հաբ՝ 10 օրվա ընթացքում,
- **ՄԻԱՎ-ի վարակակիրների** օրգանիզմում թոքաբորբը և փորլուծությունը կանխելու համար ընդունել 480մլ/գրամանոց 1հաբ՝ օրական 1անգամ,
- **ՉԻԱՀ-ի վարակակիրների** արյունոտ փորլուծությունը դադարեցնելու համար՝ օրական 2 անգամ 480մլ/գրամ՝ 10 օրվա ընթացքում,
- **վարակակիրները թոքաբորբի դեպքում** կարող են գործածել օրական 3 անգամ 480մլ/գրամանոց 4հաբ՝ 21օրվա ընթացքում:

Փոխարինող դեղամիջոցներ.

- **երիկամների և միզապարկի բորբոքման դեպքում՝** ցեֆիքսիմ, ցիպրոֆլոքսացին, նիտրոֆուրանտոն,
- **ՉԻԱՀ-ի վարակակիրների** փորլուծությունը դադարեցնելու համար՝ նոթիլոքսացին, մետրոնիզազոլ:



Այլ դեղորայքի հետ հակազդեցությունները

Փենիքոնի հետ այն կարող է մեծացնել դեղորայքի ազդեցությունը և առաջացնել մարմնի մասերի ոչ կոորդինացված շարժումներ (ատաքսիա), աչքի կամայական խաղ (նիստագմոս) և շփոթմունք:

Գապսոնի հետ գործածելիս կարող է բարձրացնել տրիմետոպրիմի մակարդակը և մեծացնել սակավարյունության առաջացման վտանգը:



Զգուշացում. խորհուրդ չի տրվում դեղորայքն ընդունել հղիության վերջին 3 ամիսների ընթացքում: Մի՛ ընդունեք, եթե պլերգիկ եք սուլֆայի ընտանիքին պատկանող դեղամիջոցների նկատմամբ:

ՄԻԱՎ-Ի ԿԱՆՔԱՆՈՒՄ ԵՎ ԲՈՒԿԱՆՈՒՄ

WARNING!



Գիագեպամ (Անքսիոնոլ, Քալմպոս, Վալիում)

Սա հանգստացնող դեղամիջոց է, օգտագործվում է ջղաձգությունը և նոպաները կանխելու համար: Այն նաև ունի քնաբեր ազդեցություն:

Կարևոր է. դիագեպամը կախվածություն առաջացնող դեղամիջոց է: Խորհուրդ չի տրվում օգտագործել քնաբեր այլ միջոցների և հատկապես՝ ալկոհոլի հետ:

Կողմնակի ազդեցություններ, չարաշահման նշաններն են՝ քնկոտություն, հավասարակշռության կորուստ, խառնաշփոթ:



Օգտագործման ձևը

Հղիության ընթացքում առաջացած ջղաձգության դեպքում ներարկել 20մլ/գրամ ուղիղ աղիքի մեջ, անհրաժեշտության դեպքում կրկնել 10 րոպե հետո՝ օգտագործելով 15 մլ/գ: Եթե չունեք ներարկման դեղամիջոց, ապա փշրեք դեղահաբը և ընդունեք ջրով:

Զգուշացում. Խորհուրդ չի տրվում ընդունել դիագեպամ հղիության ընթացքում, քանի որ այն կարող է երեխայի օրգանիզմում արատների առաջացման պատճառ դառնալ: Եվ քանի որ փոխանցվում է նաև մայրական կաթի միջոցով, հետևաբար հակացուցված է նաև կրծքով կերակրող մայրերին:

Գիբլոքսացիլին

Սա ևս պենիցիլինի ընտանիքին պատկանող դեղամիջոց է, օգտագործվում է մաշկային և կրծքի ինֆեկցիաների դեպքում:

Կարևոր է. կարող է առաջացնել ալերգիկ հակազդեցություն:

Կողմնակի ազդեցություններ՝ սրտխառնոց, սրտթափոց, փորլուծություն: Կանանց օրգանիզմում առաջացնում է սնկային ինֆեկցիաներ, իսկ երեխաների նստատեղի հատվածում՝ ցան:



Օգտագործման ձևը

Մաշկի կամ կրծքի բորբոքումների դեպքում խմել 500մլ/գրամ օրական 7-10 անգամ՝ 4օրվա ընթացքում:

Փոխարինող դեղամիջոցներ՝ ցեպալեքսան, էրիտրոմիցին, պենիցիլին:

Զգուշացում. Խորհուրդ չի տրվում ընդունել այն մարդկանց, ովքեր ալերգիկ են պենիցիլինի ընտանիքին պատկանող դեղամիջոցների նկատմամբ:

Էրգոմետրին մալես, Մետիլերգոնոլին մալես
(Անուրիագ, Էրգոնոլին, Էրգոտրատ, Մետերգին, Մետիլերգոնոլին)

Էրգոմետրինը առաջացնում է արգանդի կծկում, օգտագործվում է ծննդաբերության հետևանքով առաջացած ուժեղ արյունահոսությունը կարգավորելու համար: Էրգոմետրինը և մետիլերգոնոլինը նույն դեղամիջոցի անվանումներն են, որոնց գործածումից հետո անհրաժեշտ է դիմել բժշկի:

Կողմնակի ազդեցություններ՝ սրտխառնոց, սրտթափոց, գլխապտույտ, քրտնարտադրություն:



Օգտագործման ձևը

Ծննդաբերությունից հետո առաջացած առատ արյունահոսության դեպքում ընկերքի դուրս գալուց հետո ընդունել 0.2մլ/գրամանոց 1հաբ՝ 6-12 ժամը մեկ անգամ: Ըարունակել այնքան, որքան անհրաժեշտ է:

Զգուշացում. արգելվում է ընդունել ծննդաբերությունն արագացնելու կամ անցանկալի հղիությունը ընդհատելու համար: Խորհուրդ չի տրվում գործածել մինչև երեխայի ծնվելն ու ընկերքի դուրս գալը:

ՄԱՌՈՂՁ ԼԻՆԵՆՈՒ ԻՍ ԻՐԱՎՈՒՆԵՐ



Դոքսիցիկլին (Բիոքլին, Դոքիքս, Մոնոդոքս, Վիբրամցին, Վիբրա, Տաքս)

Դոքսիցիկլինը տետրացիկլինի ընտանիքին պատկանող դեղամիջոց է, օգտագործվում է տարբեր տեսակի բորբոքումների ժամանակ, ներառյալ՝ սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաները, սեռական օրգանների և մաշկային բորբոքումները:

Կարևոր է. խորհուրդ չի տրվում խմել կաթի կամ այլ կաթնամթերքի, ինչպես նաև՝ անտիցիդների հետ: Ընդունեք նստած վիճակում, որպեսզի կանխեք գրգռվածության առաջացումը:

Կողմնակի ազդեցություններ՝ փորլուծություն և ստամոքսի խանգարում: Որոշ մարդկանց մաշկի վրա երկար ժամանակ արևի տակ մնալուց հետո կարող են բծեր առաջանալ, կանանց օրգանիզմում՝ սնկային ինֆեկցիաներ, երեխաների նստատեղի հատվածում՝ ցան:



Օգտագործման ձևը.
սիֆիլիսի դեպքում, երբ սեռական օրգաններում դեռ առկա են վերքեր, ընդունել 100մլ/գրամ օրական 2 անգամ՝ 14 օրվա ընթացքում,
պառնիկախոցի և մաշկային այլ ինֆեկցիաների ժամանակ ընդունել 100մլ/գրամ օրական 2անգամ՝ 14 օրվա ընթացքում:
Փոխարինող դեղամիջոցներ՝ հետևյալ ինֆեկցիաների դեպքում.
սիֆիլիսի՝ բենզատին, պենիցիլին, էրիտրոմիցին, տետրացիկլին,
զոնոռեալի՝ ցեֆիկսիմ, ցիպրոֆլոքսացին,
քլամիդիոզի՝ ամոքսիցիլին, ազիտրոմիցին, էրիտրոմիցին, տետրացիկլին,
մաշկային բորբոքման՝ դիքլոքսացիլին, էրիտրոմիցին, պենիցիլին, տետրացիկլին,
ծննդաբերությունից հետո առաջացած բորբոքումների՝ ամպիցիլին, ցիպրոֆլոքսացին, մետրոնիդազոլ:

Զգուշացում. հակացուցված է հղի և կրծքով կերակրող կանանց: Խորհուրդ չի տրվում օգտագործել այն դեղորայքը, որը երկար ժամանակ մնացել է արևի տակ, կամ որի պիտանելիության ժամկետը լրացել է:

Էպինեպրին կամ Ադրենալին (Ադրենալին)

Սրանք նույն դեղամիջոցի երկու անվանումներն են: Օգտագործվում է դեղամիջոցների, օրինակ՝ պենիցիլինի առաջացրած ալերգիկ հակազդեցությունների և շոկի դեպքերում:

Կարևոր է. նախապես շոշափեք տվյալ անձի զարկերակը, եթե ներարկումից հետո զարկերը 1րոպեի ընթացքում ավելանում են 30-ով, սպա խորհուրդ չի տրվում ներարկել 2-րդ չափաբաժինը: Չի կարելի ներարկել 3 չափաբաժինից ավելի:








Կողմնակի ազդեցություններ՝ վախ, հոգնածություն, նյարդայնություն, ջղաձգություն, գլխացավեր, գլխապտույտ, սրտի զարկերի արագացում:

Չարաշահման նշաններն են՝ արյան բարձր ճնշում, սրտի զարկերի անկանոնություն, կաթված:



Օգտագործման ձևը
Ալերգիկ հակազդեցությունները և շոկը որոշ չափով մեղմելու համար ներարկել 1/2մլ/գրամ (1/2մլ) մաշկի տակ (բայց ոչ վերին բազուկի շրջանում): Անհրաժեշտության դեպքում 2-րդ չափաբաժինը ներարկել 20-30 րոպե հետո, 3-րդ չափաբաժինը՝ ևս 20-30 րոպե հետո:

Զգուշացում. չներարկել նշանակվածից մեծ չափաքանակ: Խորհուրդ չի տրվում կատարել միջմկանային ներարկում, պետք է ներարկել վերին բազուկի շրջանում:

<p>Գիբլոքսացիլին</p> <p>Սա ևս պենիցիլինի ընտանիքին պատկանող դեղամիջոց է, օգտագործվում է մաշկային և կրծքի ինֆեկցիաների դեպքում:</p> <p>Կարևոր է. կարող է առաջացնել ալերգիկ հակազդեցություն:</p> <p>Կողմնակի ազդեցություններ` սրտխառնոց, սրտթափոց, փորլուծություն: Կանանց օրգանիզմում առաջացնում է սնկային ինֆեկցիաներ, իսկ երեխաների մատատեղի հատվածում` ցան:</p>	
<p>Օգտագործման ձևը</p> <p>Մաշկի կամ կրծքի բորբոքումների դեպքում խմել 500մլ/գրամ օրական 7-10 անգամ` 4օրվա ընթացքում:</p> <p>Փոխարինող դեղամիջոցներ` ցեպալեքսան, էրիտրոմիցին, պենիցիլին:</p>	 
<p> Զգուշացում. խորհուրդ չի տրվում ընդունել այն մարդկանց, ովքեր ալերգիկ են պենիցիլինի ընտանիքին պատկանող դեղամիջոցների նկատմամբ:</p>	<p>WARNING!</p>  
<p>Նորֆլոքսացին (Լեքսինոր, Նորոքսին, Ուրիտրացին)</p> <p>Նորֆլոքսացինը ֆտորիսինոլոնների ընտանիքին պատկանող դեղամիջոց է, օգտագործվում է գոնոռեայի, միզապարկի և երիկամների բորբոքումների և փորլուծության ծանր դեպքերի բուժման ժամանակ:</p> <p>Կողմնակի ազդեցություններ` կարող է առաջացնել ուժեղ գլխապտույտ և ուժեղացնել կոֆեինի ազդեցությունը: Այս ամենից խուսափելու համար ընդունեք ուտելուց 1 ժամ առաջ կամ 2 ժամ հետո:</p>	
<p>Օգտագործման ձևը` նշված ինֆեկցիաների դեպքում.</p> <ul style="list-style-type: none"> • միզապարկի բորբոքում. 400մլ/գ օրական 2 անգամ` 3 օրվա ընթացքում, • երիկամների բորբոքում. 400մլ/գ օրական 2 անգամ` 10 օրվա ընթացքում, • գոնոռեա. 800մլ/գ` միայն մեկ անգամ, • ՄԻԱՎ-ի վարակակիրներ փորլուծության դեպքում ընդունել 400մլ/գ` միայն մեկ անգամ: <p>Փոխարինող դեղամիջոցներ` նշված դեպքերում.</p> <ul style="list-style-type: none"> • միզապարկի բորբոքումների` ամոքսացիլին, կոտրիմաքսազոլ, նիտրոֆուրանտոն, • երիկամների բորբոքումների` ամոքսիցիլին, ցեֆիքսիմ, ցիպրոֆլոքսացին, կոտրիմաքսազոլ, • գոնոռեա` ցեֆիքսիմ, ցիպրոֆլոքսացին, դոքսիցիլին, • ՄԻԱՎ-ի վարակակիրների փորլուծության դեպքում` մետրոնիդազոլ, կոտրիմոքսազոլ: 	
<p> Զգուշացում. խմել մեծ քանակության ջրով: Մի գործածեք այս դեղամիջոցը, եթե ընդունում եք անտացիդներ կամ երկաթ և ցինկ պարունակող վիտամիններ: Եթե նորֆլոքսացինը կամ քուինոլոնը առաջացնում են ալերգիկ հակազդեցություններ, ապա դադարեցրեք դրանց ընդունումը: Կրծքով կերակրող, հղի կանայք, ինչպես նաև մինչև 16 տարեկանները պետք է խուսափեն այս դեղամիջոցի ընդունումից:</p>	

ՄԴՂԱՍԻՏԻՎ ՈՎ ԱՍԻՏՈՒՄ ԻՍ ԻՐԱՎԱՄԱՐԵԸ




Էրիտրոմիցին

Էրիտրոմիցինը մաքրովիդի ընտանիքին պատկանող հակաբորբոքային դեղամիջոց է, օգտագործվում է տարբեր բորբոքումների դեմ՝ ներառյալ սեռական ճանապարհով փոխանցվող և մաշկային ինֆեկցիաները: Այն հասանելի է բոլորին, կարելի է ընդունել նաև հղիության ընթացքում:

Կարևոր է. այն կունենա իր լավագույն ազդեցությունը, եթե խմեք ուտելուց 1 ժամ առաջ կամ 2 ժամ հետո: Եթե առաջացնում է ստամոքսի խանգարում, ապա ընդունեք սննդի հետ միասին:

Մի՛ կոտրեք դեղահաբը: Այն հաճախ լինում է թաղանթավորված, որը նրան պաշտպանում է ստամոքսահյութի կողմից քայքայվելուց, մինչև այն կսկսի գործել:

Կողմնակի ազդեցություններ. կարող է առաջացնել ստամոքսի խանգարում, սրտխառնոց, սրտթափոց և փորլուծություն:






Օգտագործման ձևը՝ նշված դեպքերում.


- **քլամիդիոզի**՝ 500մլ/գ օրական 4անգամ՝ 7օրվա ընթացքում,
- **շանքրոիդի**՝ 500մլ/գ օրական 4անգամ՝ 7օրվա ընթացքում,
- **սիֆիլիսի**՝ 500մլ/գ օրական 4անգամ՝ 7օրվա ընթացքում,
- **կրծքի բորբոքման**՝ 500մլ/գ օրական 4անգամ՝ 7օրվա ընթացքում,
- **պատկելախոցի և մաշկային ինֆեկցիաների**՝ 250մլ/գ օրական 4անգամ՝ 7-10 օրվա ընթացքում,
- **աչքի բորբոքման դեպքում (կոնյուկտիվ)**՝ դնել քսուքի քիչ քանակություն ստորին կոպի մեջ օրական 3-4 անգամ՝ 2-3 օրվա ընթացքում,
- **նորածնի աչքի խնամքի համար**՝ դնել 1%-անոց քսուք 2 աչքերի մեջ՝ ծնվելուց հետո 2 ժամվա ընթացքում:

Փոխարինող դեղամիջոցներ՝ հետևյալ ինֆեկցիաների դեպքում.

- **քլամիդիոզի**՝ ամոքսացիլին, ազիտրոմիցին, դոքսիցիլին, տետրացիլին,
- **շանքրոիդի**՝ ազիտրոմիցին, ցիպրոֆլոքսացին,
- **սիֆիլիսի**՝ բենզատին, պենիցիլին, դոքսիցիլին, տետրացիլին,
- **կրծքի բորբոքման**՝ դիքլոքսացիլին,
- **մաշկային ինֆեկցիաների**՝ ցեֆալեքսիմ, դիքլոքսացիլին, դոքսիցիլին, պենիցիլին, տետրացիլին,
- **նորածնի աչքի խնամքի**՝ տետրացիլինի՝ աչքի համար նախատեսված քսուք:

 **Զգուշացում.** խորհուրդ չի տրվում ընդունել էրիտրոմիցին, եթե պերզիկ եք մաքրովիդի ընտանիքին պատկանող դեղամիջոցների նկատմամբ:


Պրոբենիցիդ (Բենեմիդ, Պրոբալան)




Այս դեղորայքն օգտագործվում է պենիցիլինի ընտանիքին պատկանող դեղամիջոցների հետ, որպեսզի երկարացնի օրգանիզմում վերջինիս ազդեցությունը: Այն բարձրացնում է բուժման արդյունավետությունը:


Կարևոր է. խորհուրդ չի տրվում տալ 2 տարեկանից փոքր երեխաներին:

Կողմնակի ազդեցություններ՝ երբեմն կարող է առաջացնել գլխացավեր, սրտխառնոց և սրտթափոց:



Օգտագործման ձևը
Խմել 500մլ/գ-1գ ամեն անգամ, երբ ընդունում եք պենիցիլինի ընտանիքին պատկանող որևէ դեղորայք:

 **Զգուշացում.** հղիության, կրծքով կերակրելու ընթացքում և ստամոքսի խոց ունենալու դեպքում խուսափեք տվյալ դեղորայքի ընդունումից:

Գենտիան Վիոլետ (Զրիստալ Վիոլետ, մետիլլոզանիլինիում քլորիդ)	
<p>Սա ախտահանիչ հեղուկ է, օգնում է պայքարել մաշկային, բերանում և սեռական օրգաններում առաջացած բորբոքումների դեպքում:</p> <p>Կարևոր է. երեխայի բերանի մեջ դնելուց հետո շրջեք նրան երեսն ի վայր, որպեսզի չկարողանա կուլ տալ դեղորայքի մեծ քանակություն: Մաշկի կամ հագուստի հետ շփման դեպքում այն կհաղորդի մանուշակագույն երանգ:</p> <p>Կողմնակի ազդեցություններ. դեղամիջոցի երկար ընդունումը կարող է առաջացնել գրգռվածություն: Վերքի կամ կտրվածքի վրա օգտագործման դեպքում, լավանալուց հետո մաշկին կարող է հաղորդել մանուշակագույն երանգ:</p>	
<p>Օգտագործման ձևը</p> <p>Սեռական օրգաններում սնկային ինֆեկցիաների դեպքում թրջել բամբակը 1%-անոց հեղուկի մեջ և տեղադրել հեշտոցում, թողնել ողջ գիշերվա ընթացքում, բամբակը անպայման դուրս բերել առավոտյան, կրկնել 3 անգամ:</p> <p>Բերանի խոռոչում սնկային ինֆեկցիաների դեպքում ողողել 1%-անոց լուծույթով օրական 2 անգամ՝ 1րոպե տևողությամբ, կուլ չտալ:</p> <p>Մաշկային բորբոքումների դեպքում նախ լվանալ մաշկը օճառաջրով և չորացնել: Հետո կաթեցնել մաշկի, բերանի մեջ կամ սեռական օրգանների վրա օրական 3 անգամ՝ 5 օրվա ընթացքում:</p> <p>ՄԻԱՎ-ի վարակակիրների մաշկային բորբոքման դեպքում նախ մաշկը լվանալ օճառաջրով և չորացնել: Հետո կաթեցնել մաշկի, բերանի մեջ և սեռական օրգանների վրա՝ օրական 2 անգամ: Կատարել այնքան ժամանակ, մինչև գրգռվածությունն անհետանա:</p> <p>Փոխարինող դեղամիջոցներ՝ ստորև նշված դեպքերում.</p> <ul style="list-style-type: none"> • մաշկային բորբոքումների՝ հակաբորբոքայիններ, յոդ, քսուքներ, • բերանի խոռոչում սնկային ինֆեկցիաների՝ կիտրոն (ոչ երեխաների դեպքում), նիստատին, • սեռական օրգաններում սնկային ինֆեկցիաների՝ նիստատին, միքոնոզոլ, քլոտրիմազոլ: 	
	<p>Զգուշացում. գենտիան վիոլետ օգտագործելու ընթացքում խուսափեք սեռական հարաբերություններ ունենալուց, որպեսզի այն չփոխանցվի ձեր գուգրնկերոջը: Դադարեցրեք տվյալ դեղամիջոցի օգտագործումը, այն առաջացնում է գրգռվածություն: Զգուշացեք աչքի հետ շփումից:</p>

Հիդրոկորտիզոն կամ Կորտիզոլ (Էկզաբորտ, Հիքոտիլ, Սոլու-Զորտեֆ)	
<p>Հիդրոկորտիզոնը հակաալտուցային և քորը հանգստացնող քսուք է, օգտագործվում է մաշկային ցանի բուժման ժամանակ, ինչպես նաև՝ թութքի դեպքում:</p> <p>Կարևոր է. մի՛ ծածկեք քսուքը բանդաժով (փորագոտի): Հղի և կրծքով կերակրող կանայք նույնպես կարող են օգտագործել քսուքը, բայց հաբերի դեպքում պետք է զգուշանալ:</p> <p>Կողմնակի ազդեցություններ. 10 օրից ավել օգտագործելու դեպքում հնարավոր է մաշկի բարակում և սպիների առաջացում:</p>	
<p>Օգտագործման ձևը</p> <p>Ցանի, քորի և թութքի դեպքում քսել մաշկի տվյալ հատվածի վրա՝ օրական 3-4 անգամ:</p>	



WARNING!

ԾԱԵՆՍԱԿԵ ԴԳՁՍԵՆՏՆԵՐՈ ՈՆԳՆԵՐԿ

Միքոնազոլ (Գակտարին, Ֆունգտոպիլ, Միկատին, Մոնիստատ)

Միքոնազոլը հակասնկային դեղամիջոց է, օգտագործվում է սեռական օրգաններում և մաշկի վրա առաջացած սնկային հիվանդությունների բուժման ժամանակ:



Կարևոր է. եթե դեղորայքի ընդունումից առաջանում է գրգռվածություն, ապա դադարեցրեք այն: Այդ ընթացքում 3-4 օր խուսափեք սեռական հարաբերություններից, որպեսզի չփոխանցվի ձեր գուգրնկերոջը: Ջգուշացեք աչքի հետ շփումից:


Կողմնակի ազդեցություններ՝ գրգռվածություն:

Օգտագործման ձևը
Սեռական օրգաններում սնկային ինֆեկցիաների դեպքում.

- հեշտոցի մեջ տեղադրել քսուրի 5գրամը՝ 7գիշերվա ընթացքում,
- 100մլ/գրամանոց 1 ներդիր՝ 7գիշերվա ընթացքում,
- 200մլ/գրամանոց 1 ներդիր՝ 3 գիշերվա ընթացքում,
- մաշկի վրա սնկային ինֆեկցիաների դեպքում տարածել քսուրը օրական 2անգամ այնքան ժամանակ, մինչև այն անցնի:

Փոխարինող դեղամիջոցներ
Քոլոր սնկային ինֆեկցիաների դեպքում՝ գենիտին վիուլետ, նիստատին, քլոտրիմազոլ:

 **Ջգուշացում.** խորհուրդ չի տրվում ընդունել տվյալ դեղորայքը հղիության առաջին 3 ամիսների ընթացքում:

Նիֆեդիպին (Ադալատ, Նիլապին, Նիֆեկարդ, Նիֆեդ, Պրոկարդիա)

Օգտագործվում է արյան բարձր ճնշումը արագ իջեցնելու համար:



Կարևոր է. դեղորայքի հետ մի ընդունեք գրեյպֆրուտի (թուրինջ) հյութ, այն կթուլացնի դեղամիջոցի ազդեցությունը:


Կողմնակի ազդեցություններ՝ գլխացավ, գլխապտույտ, ցան, դեմքի կարմրություն:

Օգտագործման ձևը
Միայն դիզբեֆլեքսիայի պատճառով առաջացած արյան բարձր ճնշման դեպքում.

- **դեղապատիճները** կտրեք և կուլ տվեք պարունակությունը կամ ծակեք այն և դրեք լեզվի տակ,
- **դեղահաբը** փշրեք, խառնեք ջրին, որ ստացվի մածուցիկ զանգված, դրեք լեզվի տակ կամ ծամեք դեղահաբը և ջրի հետ կուլ տվեք:

Այլ դեղամիջոցների հետ հակազդեցությունները
Կարբամազեպին, պենոբարբիտալ, պենիտոն դեղամիջոցների ազդեցությունը կթուլանա նիֆեդիպինի հետ ընդունելու դեպքում:

 **Ջգուշացում.** կարող են օգտագործել միայն ողնաշարի վնասվածքների պատճառով դիզբեֆլեքսիա ունեցող հիվանդները: Խորհուրդ չի տրվում ընդունել արյան բարձր ճնշման, հիպերտոնիայի և սրտի հետ կապված խնդիրների դեպքում:

WARNING!

Նիտրոֆուրանտոն (Ֆուրադանտին, Մաքրոբիդ, Մաքրոդանտին)

Գործածվում է միզապարկի բորբոքումների բուժման ժամանակ:
Կողմնակի ազդեցություններ՝ սրտխառնոց, սրտթափոց, գլխացավեր, գազեր: Այս ամենը նվազեցնելու համար ընդունեք սննդի և կաթի հետ:
Զարաչահման նշաններն են՝ սրտխառնոց, կրծքավանդակի մասում ցավեր: Մեզի գույնը կարող է դառնալ մուգ դեղին կամ շագանակագույն:

Օգտագործման ձևը
Միզապարկի բորբոքումների դեպքում ընդունել 100մլ/գ օրական 2 անգամ՝ 3 օրվա ընթացքում:
Փոխարինող դեղամիջոցներ
Միզապարկի բորբոքումների դեպքում՝ ամոքսիցիլին, կոտրիմաքսազոլ, նոթֆլոքսացին:

Զգուշացում. հղիության վերջին ամիսների ընթացքում, ինչպես նաև երիկամների խնդիրներ ունենալու դեպքում խորհուրդ չի տրվում ընդունել տվյալ դեղորայքը:



WARNING!

Իբուպրոֆեն
 (Ակտիպրոֆեն, Ադվիլ, Գենաբիլ, Մոտրին, Նուպրին, Ռուֆեն)

Իբուպրոֆենը ցավազրկող, հակաախտուցային և ջերմիջեցնող դեղամիջոց է: Շատ օգտակար է դաշտանի, հոդաբորբի և ՄԻԱՎ-ի հետևանքով առաջացած բարդությունները մեղմացնելու համար:
Կարևոր է. գրգռվածությունը նվազում է սննդի, հատկապես՝ կաթնամթերքի հետ ընդունելիս:
Կողմնակի ազդեցություններ՝ կարող է առաջացնել ստամոքսի խանգարում և ցավեր, ականջներում աղմուկ, փորկապություն:

Օգտագործման ձևը. ընդունել 200-400մլ/գ՝ օրական 4-6անգամ: Խորհուրդ չի տրվում գործածել օրական ավելի քան 2400մլ/գ:
Փոխարինող դեղամիջոցներ՝ նշված դեպքերում.
 • ցավի, այտուցների և ջերմության՝ ասպիրին,
 • ցավի և ջերմության՝ ացետամինոֆեն:

Այլ դեղամիջոցների հետ փոխազդեցությունները
Պենիստոնի հետ կարող է առաջացնել լյարդի հետ կապված խնդիրներ:

Զգուշացում. խուսափել տվյալ դեղորայքի ընդունումից վիրահատությունից մեկ շաբաթ առաջ և հետո, նաև՝ հղիության վերջին 3 ամիսների ընթացքում:



ՄԻՋԿԱՅԻՆ ԻՆՏԵՆՍԻՎ ԻՍԿՐԱԿՈՒՄԸ

Լիդոկաին (Տոպիկաին, Քսիլոկաին)

Կանխում և թեթևացնում է մաշկի թեթև գրգռվածության, մակերեսային այրվածքների ու կտրվածքների, միջատների խայթոցների հետևանքով առաջացած ցավը:
Կողմնակի ազդեցություններ՝ մաշկի գույնի փոփոխություն (սովորաբար արագ անցնում է) և մաշկային բշտիկներ:

Օգտագործման ձևը. դիզոնֆլեքսիան կանխելու համար քսուրի քիչ քանակություն տարածեք սրբանի վրա՝ նախքան կղանքը մատի օգնությամբ հեռացնելը կամ խողովակ տեղադրելը, տարածեք քսուրը միզուկի բացվածքի վրա:



Նիստատին (Դերմոդեքս, Սիկոստատին, Նիլստատ, Նիստատ)


Սա հակասնկային դեղամիջոց է, օգտագործվում է բերանի խոռոչում, սեռական օրգաններում և մաշկի վրա առաջացած բորբոքումների բուժման ժամանակ:

Կարևոր է. բուժում է միայն կանոնադրաբար (կաթնասնկախտ) կոչվող ինֆեկցիաները, մինչդեռ մոկոնազոլը բուժում է նաև այլ սնկային ինֆեկցիաներ: Քոտրիմազոլը ավելի հասանելի և մատչելի է:

Օգտագործման ձևը՝ հետևյալ դեպքերում.

- **բերանի խոռոչի և կոկորդի բորբոքումների՝** ողողել բերանը օրական 4անգամ 1մ/լ հեղուկով, 1րոպե տևողությամբ և կուլ տալ, կրկնել 5օր,
- **մաշկային բորբոքումների՝** չոր մաշկի վրա տարածել քսուքը օրական 3անգամ՝ մինչև ցանի անցնելը,
- **սեռական օրգաններում բորբոքումների դեպքում** օրական 2անգամ տեղադրել քսուքը հեշտոցի մեջ 10-14 օրվա ընթացքում կամ 14 գիշերվա ընթացքում՝ 100.000 միավոր ներդիր:

Փոխարինող դեղամիջոցներ՝ միկոնազոլ, կլոտրիմազոլ, վինեզար, գենտիան, վիոլետ:

 **Զգուշացում.** եթե նիստատինի օգտագործումից հետո առաջանում է գրգռվածություն, ապա դադարեցրեք դրա ընդունումը: Դեղամիջոցը օգտագործելու ընթացքում խուսափեք սեռական հարաբերություններից:

Պարացետամոլ կամ ացետամինոֆեն (Պանադոլ, Տենպրա, Տիլենոլ)

Պարացետամոլը և ացետամինոֆենը նույն դեղամիջոցի անվանումներն են, օգտագործվում է ցավը մեղմելու և ջերմությունը իջեցնելու համար: Ամենաապահով ցավազրկող միջոցներից մեկն է: Այն չի առաջացնում ստամոքսի գրգռվածություն, կարող է օգտագործվել ասպիրինի և իբուպրոֆենի փոխարեն և օգնել նրանց, ովքեր ունեն ստամոքսի խոց: Այն ապահով է նաև հղի կանանց համար, քիչ չափաբաժնով կարելի է տալ նաև երեխաներին:


Կարևոր է. պարացետամոլը չի բուժում հիվանդությունը, այն միայն մեղմացնում է ցավն ու ջերմությունը: Շատ կարևոր է, որ գտնեք դրանց առաջացման պատճառը:

Չարաշահման նշաններն են՝ սրտխառնոց, սրտթափոց, ստամոքսային ցավեր:

Օգտագործման ձևը

Ցավը մեղմելու և ջերմությունը իջեցնելու համար ընդունել 500-1000 մլ/գ՝ 4-6ժամը մեկ, այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է:

Փոխարինող դեղամիջոցներ՝ ասպիրինը և իբուպրոֆենը կարող են փոխարինել, բայց ոչ հղիության ընթացքում:


 **Զգուշացում.** խորհուրդ չի տրվում ընդունել, եթե ունեք լյարդի կամ երիկամների հետ կապված խնդիրներ: Կարող է ձեզ վնասել, եթե պարբերաբար օգտագործեք ավելի քան հետ կամ դրա ընդունումից հետո:

Պենիցիլին (Բենտապեն, ֆենոքսիմետիլ պենիցիլին)

Պենիցիլինը հակաբորբոքային դեղամիջոց է, օգտագործվում է բերանում, ատամների, մաշկի վրա, արգանդում և մարմնի այլ մասերում առաջացած բորբոքումների բուժման ժամանակ: Ցավոք, նրա առաջացրած ազդեցության պատճառով այն ներկայումս ավելի քիչ է օգտագործվում:

Կարևոր է. կարող է առաջացնել ալերգիկ հակազդեցություն կամ ալերգիկ շոկ:
Կողմնակի ազդեցություններ՝ ցան:

Օգտագործման ձևը
Մաշկային բորբոքումների և վերքերի դեպքում ընդունել 250մլ/գ օրական 4 անգամ՝ 10 օրվա ընթացքում:
Փոխարինող դեղամիջոցներ.
Ծննդաբերությունից հետո առաջացած բորբոքումների դեպքում՝ ամոքսիցիլին, ամպիցիլին, ցիպրոֆլոքսացին, դոքսիցիլին, մետրոնիդազոլ,
մաշկային բորբոքումների՝ դիքլոքսիլին, դոքսիցիլին, էրիտրոմիցին, տետրացիկլին:

 **Զգուշացում.** խորհուրդ չի տրվում ընդունել այն մարդկանց, ովքեր ալերգիկ են պենիցիլինի ընտանիքին պատկանող ցանկացած դեղորայքի նկատմամբ:



WARNING!




Պոդոֆիլին (Բոնդիլոքս, Պոդոկոն-25, պոդոֆիլոն ռեզին)

Պոդոֆիլինը հեղուկ է, օգտագործվում է սեռական օրգաններում առաջացած կոշտ հատվածները վերացնելու համար:




Կարևոր է. այն առողջ մաշկի հետ շփման դեպքում հեշտությամբ առաջացնում է գրգռվածություն: Օգտագործեք միայն քիչ քանակությամբ՝ 1/2մլ և ավելի քիչ: Նախապես կոշտուկի շրջակա մաշկը պաշտպանեք վազելինի օգնությամբ:
Կողմնակի ազդեցություններ՝ առողջ մաշկին շփվելիս հեշտությամբ կարող է առաջացնել գրգռվածություն:

Օգտագործման ձևը
 Կոշտուկի վրա տարածել բամբակյա տամպոնի (միջադիր), ատամփորիչի կամ ոլորած կտորի միջոցով: 4 ժամ անց լվանալ օճառով և մաքուր ջրով: Կրկնել շաբաթական մեկ անգամ՝ 4 շաբաթվա ընթացքում:
Փոխարինող դեղամիջոցներ
Սեռական օրգաններում կոշտուկների դեպքում՝ տրիքլորացետիկ, բիքլորացետիկ աքսիդ:

 **Զգուշացում.** չօգտագործել դեղորայքը արյունահոսող կամ մազեր պարունակող կոշտուկների, ծննդանշանների, խալերի և բերանի խոռոչում խնդիրներ ունենալու դեպքում: Դադարեցրեք դեղորայքի գործածությունը, եթե այն առաջացնում է մաշկային սուր գրգռվածություն, ինչպես նաև՝ հղիության և կրծքով կերակրելու ընթացքում:



ՄԻԿՐՈԲԻԿԱԿԱՆ ԻՆՖԵԿՑԻՆՈՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

<p>Պրոկահին պենիցիլին (Բենզիլպենիցիլին Պրոկահին, Բիցիլին, Կրիստիցիլին, Դուրացիլին, Պենաբուր, Ֆիզիպեն, Վիցիլին)</p> <p>Օգտագործվում է պառկելախոցերի բորբոքումների և գոնոռեայի (եթե չկա պենիցիլինի նկատմամբ հարմարվողականություն) բուժման ժամանակ:</p> <p>Կարևոր է. պրոբենիցիդի հետ ընդունելու դեպքում այն արյան մեջ պահպանում է պենիցիլինի ազդեցությունը, ինչը բուժումը դարձնում է ավելի արդյունավետ:</p> <p>Կողմնակի ազդեցություններ. կանայք ունենում են սնկային ինֆեկցիաներ, իսկ երեխաների նստատեղի հատվածում առաջանում է ցան:</p>	
<p>Օգտագործման ձևը Փոխարինող դեղամիջոցներ Հղիության ընթացքում առաջացած ջերմության դեպքում՝ մետրոնիդազոլ, ցեֆտրաքսոն, ցեֆազոլին:</p>	
<p> Զգուշացում. պրոկահին պենիցիլինի հետևանքով շնչարգելք ունեցող հիվանդներն ունենում են նոպաներ: Արգելվում է այս դեղորայքն ընդունել տետրացիկլինի հետ: Խորհուրդ չի տրվում օգտագործել պրոկահին, եթե պերզիկ եք պենիցիլինի ընտանիքին պատկանող որևէ հակաբորբոքային դեղամիջոցի նկատմամբ: Խորհուրդ չի տրվում կատարել երակային ներարկում:</p>	
<p>Կետանուս տոքսոլդ (Տետավաքս)</p> <p>Սա փայտացման դեմ պատվաստանյութ է: Այն կարելի է ընդունել և՛ հղիության ընթացքում, և՛ ծննդաբերությունից ու վիժելուց հետո: Եթե կինը հղիության ընթացքում ստանում է 2 ներարկում (նախընտրելի է 3-ը), ապա այն նորածնի օրգանիզմում կանխում է այս մահացու հիվանդության առաջացումը:</p> <p>Կարևոր է. փայտացման դեմ պատվաստանյութը պետք է ընդունեն բոլորը՝ սկսած մանուկ հասակից:</p> <p>Կողմնակի ազդեցություններ՝ ցավ, կարմրություն, ջերմություն, թեթևակի քրտնարտադրություն:</p> <p>Փայտացումից ամբողջ կյանքի ընթացքում պաշտպանված լինելու համար դուք պետք է ստանաք 5 պատվաստում և 1-ական ներարկում՝ յուրաքանչյուր 10 տարին մեկ անգամ:</p>	
<p>Օգտագործման ձևը Յուրաքանչյուր ներարկման ժամանակ ներարկել 0.5մլ վերին բազուկի հատվածում:</p>	

ՄԱՌՈՋ ԼԻՆԵՆՈՒ ԻՍ ԻՐԱՎՈՒՄԸ



Տետրացիկին (Աքրոմիցին, Սուամիցին, Տերամիցին, Տերացին, Ունիմիցին)

Տետրացիկինի ընտանիքին պատկանող հակաբորբոքային դեղորայք է, օգտագործվում է տարբեր ինֆեկցիաների բուժման ժամանակ՝ ներառյալ քլամիդիոզը, սիֆիլիսը, սեռական օրգանների, երիկամների և միզապարկի բորբոքումները: Դոքսիցիկլինը կարելի է օգտագործել վերը նշված բոլոր բորբոքումների դեպքում, սակայն այն ավելի մատչելի և հասանելի դեղամիջոց է:

Կարևոր է. տետրացիկինը չի բուժում մրսածությունն ու չի կանխում ՄԻԱՎ-ը:

Կողմնակի ազդեցություններ. արևի տակ մնալու դեպքում կարող է առաջացնել մաշկային ցան, ինչպես նաև՝ փորլուծություն և ստամոքսի խանգարում:



Օգտագործման ձևը՝ նշված դեպքերում.

- **քլամիդիոզի՝** 500մլ/գ օրական 4անգամ՝ 7 օրվա ընթացքում,
- **սիֆիլիսի՝** 500մլ/գ օրական 4անգամ՝ 14 օրվա ընթացքում,
- **սեռական օրգաններում բորբոքումների՝** 500մլ/գ՝ օրական 4 անգամ, մինչև ջերմությունն իջնի և ևս 2 հավելյալ օր,
- **մաշկային բորբոքումների դեպքում** ընդունել 250մլ/գ օրական 4 անգամ՝ 14 օրվա ընթացքում,
- **նորածնի աչքի խնամքի համար** դնել քսուքի քիչ քանակություն աչքերի մեջ՝ միայն մեկ անգամ:

Փոխարինող դեղամիջոցներ՝ նշված ինֆեկցիաների դեպքում.

- **քլամիդիոզի՝** ազիտրոմիցին, դոքսիցիկլին, էրիտրոմիցին,
- **սիֆիլիսի՝** բենզատին պենիցիլին, դոքսիցիկլին, էրիտրոմիցին,
- **մաշկային բորբոքումների՝** ցեֆալեքսիմ, դիքլոքսիցիլին, դոքսիցիկլին, էրիտրոմիցին, պենիցիլին,
- **նորածնի աչքի խնամքի համար՝** էրիտրոմիցինի քսուք:



Զգուշացում. խուսափեք դեղորայքից կաթնամթերք և թթվայնությունը չեզոքացնող դեղամիջոցներ ընդունելուց հետո մեկ ժամվա ընթացքում: Մի ընդունեք այն դեղորայքը, որը երկար ժամանակ մնացել է արևի ճառագայթների տակ, կամ որի պիտանելիության ժամկետը սպառվել է: Խորհուրդ չի տրվում ընդունել հղի կամ կրծքով կերակրող կանանց:

Տրիքլորացետիկ աքսիդ, բիքլորացետիկ աքսիդ

Տրիքլորացետիկ աքսիդ կամ բիքլորացետիկ աքսիդը կարելի է օգտագործել սեռական օրգաններում կոշտուկների առաջացման դեպքում:

Կարևոր է. նախ կոշտուկի շրջակա մաշկը պաշտպանեք վազելինի միջոցով, հետո տարածեք տրիքլորացետիկ աքսիդը: 15-30 րոպեի ընթացքում այն կառաջացնի մրմուռ: Առողջ մաշկի վրա շփվելու դեպքում մաշկն անմիջապես լվացրեք օճառաջրով, կարելի է օգտագործել նաև մանկական ցանափոշի կամ կերակրի սոդա:

Կողմնակի ազդեցություններ՝ մաշկի հետ շփման դեպքում կարող է վնասել այն:

Օգտագործման ձևը. դնել միայն կոշտուկի վրա շաբաթական մեկ անգամ՝ 1-3շաբաթվա ընթացքում՝ կախված անհրաժեշտությունից:



Փոխարինող դեղամիջոց՝ պոդոպիլին:



Զգուշացում. օգտագործեք զգուշությամբ, այն առողջ մաշկը կարող է այնպես վնասել, որ առաջանա սպի:

Արդյունավետությունը հաստատելու և արյունահոսությունը նվազագույնի հասցնելու համար (դաշտանի փոխարեն արյան շատ քիչ քանակություն) ամեն օր նույն ժամին ընդունեք հաբերը, հատկապես, այն հաբերը, որոնք պարունակում են հորմոնների շատ քիչ քանակություն: Եթե 3-4ամսից չի նկատվում որևէ փոփոխություն, ապա ընդունեք 3-րդ խմբին պատկանող դեղահաբեր: Եթե այդպես շարունակվում է ևս 3ամիս, այդ դեպքում ընդունեք 4-րդ խմբին պատկանող դեղահաբեր:

Եթե կինը ամիսներ շարունակ չի ունենում դաշտան կամ դրա փոխարեն ունենում է շատ քիչ արյունահոսություն, ապա կարող է ընդունել 4-րդ խմբին պատկանող այն դեղամիջոցները, որոնցում շատ է էստրոգենի պարունակությունը:

Այն կանանց համար, ովքեր դաշտանի ընթացքում ունենում են առատ արյունահոսություն կամ ցավեր կրծքի շրջանում, նախքան սկսվելը կարող են ընդունել 3-րդ խմբին պատկանող դեղամիջոցներ, որոնց մեջ քիչ է էստրոգենի և բարձր՝ պրոգեստերոնի պարունակությունը:

Կանայք, ովքեր շարունակում են ընդունել 3-րդ խմբին պատկանող դեղորայք և չեն ունենում դաշտան, կամ արյունահոսությունը շատ քիչ է, կամ այլ հաբեր ընդունելու ընթացքում հղիացել են, կարող են ընդունել հաբեր, որոնց մեջ էստրոգենի պարունակությունն ավելի շատ է: Մեծ չափաբաժնով դեղորայքը պատկանում է 4-րդ խմբին:

4-րդ խումբ՝ մեծ չափաբաժնով դեղորայք

Մրանցում մեծ է էստրոգենի (50միկրոգրամ էստրոգեն՝ էթինիլ էստրադիոլ) և գրեթե միշտ՝ պրոգեստերոնի պարունակությունը:

Ապրանքանիշային անվանումներ.

Իվգինոն	Նեոգինոն	Օվրալ
Ֆեմենալ	Նորդիոլ	Պրիմովար

Կրծքով կերակրող կանայք, կամ նրանք, ովքեր մշտապես չպետք է օգտագործեն գլխացավի և արյան բարձր ճնշման դեմ հաբեր, կարող են ընդունել միայն պրոգեստերոն պարունակող դեղահաբեր: Մրանք կոչվում են մինի հաբեր և պատկանում են 5-րդ խմբին:

5-րդ խումբ՝ պարունակում են միայն պրոգեստերոն

Հայտնի են նաև որպես մինի հաբեր և պարունակում են միայն պրոգեստերոն

Ապրանքանիշային անվանումներ.

Ֆեմոլեն	Միկրոլուտ	Նեոգեստին	← Կարելի է նաև օգտագործել հղիությունը կանխելու համար:
Միկրոնոր	Միկրովալ	Օվրես	
Միկրոնովում	Նեոգեստ		
Նոր			

Պրոգեստերոնը պետք է ընդունել ամեն օր՝ նույն ժամին՝ ներառյալ դաշտանի օրերը: Հաճախ վերջինս դառնում է անկանոն:

ՄԱՌՈՂՁ ԼԻՆԵՆՈՒ ԻՍ ԻՐԱՎԱՌՆՔԸ

Արագ ազդող հակաբեղմնավորիչներ հաբեր

Բնական է, որ ընդունում եք հակաբեղմնավորիչ հաբեր, նույնիսկ՝ ոչ կանոնավոր կերպով: Քանի որ օգտագործում եք կարճ ժամանակով, նրանք փոխազդեցության մեջ չեն մտնում ձեր հաշմանդամության դեմ համար ընդունվող դեղորայքի հետ:



Կարող եք օգտագործել արագ ազդող հակաբեղմնավորիչներ կամ պարբերաբար ընդունվող հաբեր՝ առանց պաշտպանվելու սեռական հարաբերություններ ունենալուց հետո 5 օրվա ընթացքում՝ անցանկալի հղիությունը կանխելու համար: Այն, թե դուք քանի հաբ պետք է ընդունեք, կախված է նրա մեջ էստրոգենի և պրոգեստերոնի քանակությունից: Այս աղյուսակը պարունակում է յուրաքանչյուր տեսակի պատկանող հաբի մի քանի ապրանքանիշ: Քանի որ նույն անվանումն օգտագործվում է մի քանի դեղահաբերի համար, ապա օգտագործելուց առաջ ստուգեք նրանց մեջ հորմոնների քանակությունը:

Ինչպե՞ս ընդունել արագ ազդող հակաբեղմնավորիչները

Արագ ազդող հակաբեղմնավորիչներ	Առաջին չափաքանակ	Երկրորդ չափաքանակ (12 ժամ անց)
Բարձր դեղաբաժնով հաբեր, որոնք պարունակում են 50մկգ էթինիլ էստրադիոլ (Օվրալ, Օգեստրել)	ընդունել 2հաբ	ընդունել ևս 2հաբ
Ցածր դեղաբաժնով հաբեր, որոնք պարունակում են 30-35մկգ էթինիլ էստրադիոլ (Լո-Ֆեմենալ, Լո/Պվրալ, Միքրոգինոն, Նորդեստե)	ընդունել 4հաբ	ընդունել ևս 4հաբ
Ցածր դեղաբաժնով հաբեր, որոնք պարունակում են 20մկգ էթինիլ էստրադիոլ (Ալեսե, Լեսինա, Լուտերա)	ընդունել 5հաբ	ընդունել ևս 5հաբ
Հատուկ հակաբեղմնավորիչ հաբեր, որոնք պարունակում են էթինիլ էստրադիոլ և լեվոնորգեստրել (Տեարազինոն)	ընդունել 2հաբ	ընդունել ևս 2հաբ
Հատուկ հակաբեղմնավորիչ հաբեր, որոնք պարունակում են 1500մկգ լեվոնորգեստրել	ընդունել 72 ժամվա ընթացքում, 2-րդ հաբը՝ 12 ժամ հետո	
Հատուկ հակաբեղմնավորիչ հաբեր, որոնք պարունակում են 750մկգ լեվոնորգեստրել (Պոստինոր, Պոստինոր-2)	ընդունել 2հաբ	

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Որպես արագ ազդող հակաբեղմնավորիչ միջոց՝ 28 դեղահաբ պարունակող տոսփից ընդունեք 21-ը: Կարիք չկա ընդունելու վերջին 7 հաբերը, քանի որ դրանք չեն պարունակում հորմոններ:

Ի տարբերություն համակցված դեղամիջոցների՝ պրոգեստերոն պարունակող հաբերը միակն են, որ ունեն շատ քիչ կողմնակի ազդեցություններ (գլխացավ, սրտ-խառնոց):

ՉԻԱՀ-ի դեմ ընդունվող դեղամիջոցներ՝ հակառեպրովիրուսային թերապիա

ՉԻԱՀ-ի դեմ ընդունվող դեղորայքը կոչվում է հակառեպրովիրուսային: Սրա շնորհիվ ՉԻԱՀ-ի վարակակիր անձը կարող է ապրել ավելի երկար և առողջ կյանքով: Հակառեպրովիրուսային թերապիան առնվազն 3 դեղորայքի համակցությամբ է: Այս բաժնում կարող եք տեղեկանալ այդ թերապիային վերաբերող են որոշ դեղորայքային համակցությունների մասին: Տես անհատական դեղորայքային աղյուսակում՝ պարզելու, թե ձեր հաշմանդամության դեմ օգտագործվող դեղորայքը կարո՞ղ է փոխազդեցության մեջ մտնել ՉԻԱՀ-ի դեմ ընդունվող դեղորայքի հետ:

ՄԻԱՎ-ի վարակակրի խնամք և հակառեպրովիրուսային թերապիայի ծրագրեր

ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ը բարդ հիվանդություն է, որն ազդում է մարդու մարմնի ցանկացած օրգան-համակարգի վրա: Հենց որ հաստատվում է ձեր՝ ՄԻԱՎ-ի վարակակիր լինելու փաստը, փորձեք օգտվել խնամքի ծրագրից: Այդ դեպքում կլինեք փորձառու բժշկի հսկողության տակ, և նա կօգնի պահպանել ձեր առողջությունը: ՄԻԱՎ-ի խնամքի ծրագրերը կարող են մատակարարել դեղորայք՝ կանխելու և բուժելու դրա հետևանքով առաջացած հիվանդությունները, ապահովել խորհրդատվություն և այլ օգնություն: Կօզնեն ձեզ սկսել հակառեպրովիրուսային թերապիա, կանխել կողմնակի ազդեցությունները և փոխել ձեր թերապիան՝ դրական տեղաշարժ չնկատելու դեպքում: Այդ ծրագրերից ստացված դեղորայքը ավելի հուսալի է և մատչելի, քան մասնավոր աղբյուրներից ձեռք բերվածը:

Ե՞րբ է անհրաժեշտ հակառեպրովիրուսային թերապիան

ՄԻԱՎ-ի այն վարակակիրներին, ովքեր դեռ ունեն առողջ իմունային համակարգ, անհրաժեշտ չէ հակառեպրովիրուսային թերապիա: Դրա կարիքն ունեն միայն նրանք, ում իմունային համակարգը լավ չի գործում: CD4 կոչվող արյան թեստը կարող է դա պարզել: Եթե այս հաշվիչը հասանելի է ձեզ, և թեստը ցույց է տալիս 200-ից ցածր արդյունք, ապա ձեր բժիշկը կարող է որոշել, թե ե՞րբ է պետք սկսել հակառեպրովիրուսային թերապիան:

Սկսելուց առաջ անհրաժեշտ է քննարկել ձեր բժշկի հետ՝ պարզելու.

- Երբևէ ընդունե՞լ եք հակառեպրովիրուսային թերապիա, դրանից կարող է կախված լինել, թե ինչ դեղորայք պետք է օգտագործեք:
- Արդյոք ունե՞ք այլ հիվանդություններ՝ թոքախտ, սուր ինֆեկցիաներ կամ տենդ: Նախ կարող է առաջանալ դրանք բուժելու անհրաժեշտություն:
- Ի՞նչ օգուտ, վտանգ և հնարավոր կողմնակի ազդեցություններ կարող է ունենալ հակառեպրովիրուսային թերապիան: Փորձեք գրուցել ձեր բժշկի, ինչպես նաև՝ որևէ մեկի հետ, ով արդեն օգտվել է դրանից:
- Պատրաստ եղե՞ք ամեն օր նույն ժամին ընդունել դեղորայքը: Սա հակառեպ-

ՄԱՍՈՂՁ ԼԻՆԵՆՈՒ ԻՍ ԻՐԱՎՈՒՆԵՐ

ունենալ կողմնակի ազդեցություններ: Շատերը վկայում են այն մասին, որ ժամանակի ընթացքում կողմնակի ազդեցությունները կարող են նվազել և լիովին վերանալ: Դրանցից ամենատարածվածներն են փորլուծությունը, հոգնածության զգացողությունը, գլխացավերը, սրտխառնոցը, սրտթափոցը, ստամոքսային ցավերը, ախորժակի բացակայությունը: Նույնիսկ եթե ձեզ վատ եք զգում, ընդունեք բժշկի նշանակած բոլոր դեղամիջոցները: Որոշ կողմնակի ազդեցությունների դեպքում պետք է դադարեցնել դեղորայքի ընդունումը: Այս ազդեցությունները ներառում են անզգայություն կամ այրոցի զգացողություն ձեռքերում ու ոտքերում, տենդ, ցան, դեղնություն աչքերում, հոգնածություն, անկանոն շնչառություն, սակավարյունություն և այլ խնդիրներ՝ կապված արյան և լյարդի հետ: Լուրջ կողմնակի ազդեցությունների դեպքում անմիջապես դիմեք բժշկի:


Հակառետրովիրուսային թերապիայի համակցություններ՝ չափահասների և		
d4T(ստավուդին) 30 մլ/գ	+3TC (լամիվուդին) 150մլ/գ	+ Նեվիրապին , 200մլ/գ
Այս երեքը համակցվում են Տրիոմուն դեղահաբի մեջ		
d4T(ստավուդին) 30 մլ/գ	+3TC (լամիվուդին) 150մլ/գ	+ Էֆավիրենգ 600մլ/գ, օրական՝ մեկ անգամ
AZT(զիտուդին) 300 մլ/գ	+3TC (լամիվուդին) 150մլ/գ	+ Նեվիրապին , 200մլ/գ
AZT և 3TC համակցվում են Քոնքիվիր դեղահաբի մեջ		
AZT(զիտուդին) 300 մլ/գ	+3TC (լամիվուդին) 150մլ/գ	+ Էֆավիրենգ
AZT և 3TC համակցվում են Քոնքիվիր դեղահաբի մեջ 600մլ/գ, օրական՝ մեկ անգամ		

Կարևոր է.



Հակառետրովիրուսային թերապիայի որոշ դեղամիջոցներ առաջացնում են ավելի լուրջ կողմնակի ազդեցություններ, քան մյուսները: Դրանցից մեկը ստավուդինն (d4T) է: Այն մարդիկ, ովքեր ընդունում են d4T-ի վրա հիմնված բուժում, պետք է աստիճանաբար հրաժարվեն դրանից: Որոշ երկրներում ՄԻԱՎ-ի վարակակիրները այլևս չեն ընդունում ստավուդին: Մյուս վայրերում սա հնարավոր չէ, քանի որ դեղորայքը հասանելի չէ կամ շատ թանկարժեք է: Եթե ՄԻԱՎ-ի վարակակիր եք և ուզում եք ընդունել հակառետրովիրուսային թերապիայի դեղորայք, ապա զրուցեք ձեր համայնքի փորձառու բժշկի հետ՝ պարզելու, թե արդյոք ձեզ հասանելի չե՞ն այլ դեղամիջոցներ:

ՄՈՌՈՋ ԼԻՆԵՆՈՒ ԻՄ ԻՐԱՎՈՒՆՔԸ


WARNING!

Ստավուդին (Չերիտ) 

Ստավուդինը նույնպես հակառետրովիրուսային դեղամիջոց է և վերը նշված լամիվուդինի և նեվիրապինի պես ունի նույն կիրառությունը:



Կողմնակի ազդեցություններ. ծակծկոց, թմրություն, ձեռքերում և ոտքերում այրուցի զգացողություն: Սրտխառնոցի, սրտթափոցի, որովայնային սուր ցավերի, շնչառական խնդիրների հետ զուգորդված հոգնածության զգացումի, մարմնի ճարպային շերտում փոփոխությունների դեպքում **անմիջապես դիմել բժշկի:**  

Օգտագործման ձևը
Մարմնի 60կգ - ից ավել քաշ ունեցողները պետք է ընդունեն 40մլ/գ՝ օրական 2անգամ:
 60կգ -ից քիչ ունեցողները՝ 30մլ/գ՝ օրական 2անգամ:


 **Զգուշացում.** քիչ չափաբաժինը օգտագործվում է 60կգ-ից ցածր քաշ ունեցողների դեպքում: Հղի կանանց կամ նրանց, ովքեր 60կգ-ից ավել են, խորհուրդ չի տրվում ընդունել տվյալ դեղորայքը, եթե նրանց հասանելի է այլ դեղամիջոց: Քանի որ այն կարող է առաջացնել լուրջ կողմնակի ազդեցություններ, հետևաբար պետք է կասեցվի այն մասնագետների գործունեությունը, ովքեր խորհուրդ են տալիս ընդունել այդ դեղամիջոցը:

Զիդովուդին (Ազիդոթիմիդինրե, Ռետրովիր)

Զիդովուդինը հակառետրովիրուսային դեղամիջոց է և վերը նշված երեք դեղամիջոցների պես ունի նույն կիրառությունը: Այն օգտագործվում է հղիության և ծննդաբերության ընթացքում մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վտանգը կանխելու համար:

Կողմնակի ազդեցություններ. հոգնածություն և շնչառության արագացում: Գունատության կամ սակավարյունության որևէ նշանի դեպքում անմիջապես դիմել բժշկի:  

Օգտագործման ձևը. ընդունել 300մլ/գրամ՝ օրական 2անգամ:

Այլ դեղամիջոցների հետ հակազդեցությունները
Գապսոնի դեպքում կարող է առաջացնել սակավարյունություն:
Վալպրոիկ ասիդի դեպքում տվյալ դեղամիջոցի ազդեցությունը մեծանում է և կարող է առաջացնել սրտխառնոց, սրտթափոց և հոգնածություն: **Ռ-իֆամպիցինի դեպքում** տվյալ դեղամիջոցի ազդեցությունը նվազում է: 

ՄԻԱՎ-Ի ԿԵՆՏՐՈՆ ԻՍ ԻՐԱՎԱԿԱՆՔԸ